Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«22» օգոստոսի 2022 թ. թիվ 171 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԵԿԱՆԱՏԻ՝ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեկանատը Կենտրոնին վերապահված մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթության մակարդակում և ուսուցման առկա և հեռակա ձևերով ուսումնական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովել է՝ համապատասխան ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկանատի գործունեության կանոնակարգի, ինչպես նաև՝ դեկանատի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանի՝

2021-2022 ուստարում դեկանատն իրականացրել է աշխատանքներ՝

- Կրթական ծրագրերով նախատեսված դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների պատշաճ անցկացման վերահսկման ուղղությամբ:
- Դասացուցակների ստեղծման և համակարգման ուղղությամբ:
- Քննականան ժամանակացույցերի հաստատման և տարածման ուղղությամբ:
- Ամբիոնների ստուգարքային, քննական տեղեկագրերի, քննաթերթերի հաստատման ուղղությամբ:
- Ամբիոններում պարբերական դասալսումների իրականացման, դասապրոցեսի մշտադիտարկման, այդ թվում՝ հեռավար հարթակի մշտադիտարկման ուղղությամբ:
- Ուսանողների ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների հետ համագործակցության ուղղությամբ:

- Սահմանված կարգով ուսանողներին կրթաթոշակ (այդ թվում նաև անվանական) նշանակելու, վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի զեղչման, ուսանողական նպաստների հատկացման աշխատանքների համակարգման ուղղությամբ:
- Միջամբիոնային համագործակցության և սեփական գործառույթներից բխող այլ ուղղություններով:

Հաշվետու ուսումնական տարում վերանայվել են ամբիոնների առարկայական ծրագրերը և հաստատվել են նորացված ուսումնական պլանները (հիմք՝ հաստատված նոր ուսումնական պլաններ):

Ըստ կիսամյակների՝ համակարգողներից հավաքագրվել, հաստատվել և տարածվել են կիսամյակային դասացուցակները (հիմք՝ ցուցատախտակին փակցված դասացուցակներ, դրանց առկայությունը էլեկտրոնային դեկանատում և Կենտրոնի պաշտոնական կայքէջում):

Կիսամյակային եզրափակիչ քննությունները սկսվելուց առնվազն 7 օր առաջ համակարգողներից հավաքագրվել, հաստատվել և տարածվել են քննական ժամանակացույցերը (հիմք՝ Կենտրոնում՝ տեսանելի վայրում փակցված և Կենտրոնի պաշտոնական էլկայքում զետեղված ժամանակացույցեր):

Ըստ քննական ժամանակացույցերի հաստատվել են ամբիոնների ստուգարքային, քննական տեղեկագրերն ու քննաթերթերը (հիմք՝ ամբիոններում ստուգարքային, քննական տեղեկագրերի, քննաթերթերի առկայությունը՝ ըստ համապատասխան կրթական ծրագրի):

Հաշվետու ուստարվա առաջին կիսամյակում դասալսումները հիմնականում իրականացվել են հեռավար հարթակի մշտադիտարկման միջոցով (հիմք՝ մշտադիտարկման արդյունքների մանրամասն վերլուծություն):

Հանրային կապերի և կարիերայի բաժնի, ՈւԽ, ՈւԳԸ-ի հետ համատեղ կազմակերպվել են կուրսերի ավագների ժողովներ, հանդիպում-քննարկումներ, (հիմք՝ ժողովների, հանդիպում-քննարկումների արձանագրությունները):

Հավաքագրվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն և Կենտրոնի ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի զեղչի) և

փոխատեղման մանդատային հանձնաժողովին են ներկայացվել ուսումնական նպաստներից օգտվող, անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների տվյալները (հիմք՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի զեղչի) և փոխատեղման մանդատային հանձնաժողովի նիստերի արձանագրություններ, ԿԳՄՍ նախարարություն ներկայացված ցուցակներ):

Կազմակերպվել են ԳԿՄԿ ամբիոնների վարիչների պարբերական հանդիպում-քննարկումներ, դրանք արձանագրվել են և ուղարկվել բոլոր ամբիոններին (հիմք՝ ժողովների արձանագրությունները):

Ուսումնական տարվա վերջում Մանդատային հանձնաժողովը քննել է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների ցուցակը՝ փոխատեղում իրականացնելու համար (հիմք՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի զեղչի) և փոխատեղման մանդատային հանձնաժողովի նիստերի արձանագրություն):

Կենտրոնի հավատարմագրման գործընթացի շրջանակներում մշակվել է համապատասխան զեկույց, որը մաս է կազմել Կենտրոնի ամբողջական զեկույցի (հիմք՝ Հավատարմագրման համար ներկայացված զեկույցը), ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել Կենտրոնի հավատարմագրման ողջ գործընթացին:

Էրազմուս+ կարողությունների զարգացման ԱՐՄԴՈԿՏ ծրագրի շրջանակներում ստացվել են համապատասխան տեխնիկական միջոցներ, կահավորվել և զինվել է առանձին լսարան, ծրագրում ներգրավվել են տարբեր ամբիոնների ներկայացուցիչներ, որոնք մասնակցել են աշխատաժողովների, կազմակերպվել է Կենտրոնի ներկայացուցիչների այցելությունը Վիլնյուսի համալսարան (հիմք՝ ծրագրի էլկայքը, լսարանի առկայությունը):

Դեկանատի կողմից իրականացված միջացառումները լուսաբանվել են, ապահովվել է հանրային հրապարակայնություն և թափանցիկություն (հիմք՝ Կենտրոնի էլկայք, սոցիալական ցանցերի էջեր, խմբեր):

Դեկան Ա. Մխիթարյան